

**ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ  
ՀԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Աստղիկ Գագիկի Ղազարյան, Լիլիթ Մանուկի Աստեյան, Առնո Մկրտչի Բաղումյան՝**

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ*

*baghumyan.arn@gmail.com*

*Հոդվածն անդրադառնում է Երևան քաղաքի Ե. Չարենց, Վարդանանց և Շահինյան փողոցներով պարփակվող տարածքի քաղաքաշինական և միջավայրային խնդիրներին: Աշխատության նպատակն է բացահայտել ուսումնասիրվող տեղանքի գոյություն ունեցող իրավիճակը, վեր հանել խնդիրները և քննարկել դրանց հիման վրա առաջարկվող լուծումները: Աշխատությունը մշակվել է արխիվային փաստաթղթերի, տեղում կատարված հետազոտությունների, նախկինում արված նախագծային աշխատանքների և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա՝ նյութերի համեմատության, ընդհանրացման և մոդելավորման գիտական մեթոդներով: Աշխատությունում ներկայացվել են ուսումնասիրության ընթացքում բացահայտված խնդիրների լուծումներով ամբողջացվող երեք հայեցակարգային առաջարկություններ, որոնց արդյունքների համեմատական քննարկումը թույլ է տվել հիմնավորել սվյալ քաղաքային միջավայրի հետագա զարգացման ուղղությունները և հնարավորությունները: Հոդվածի արդյունքները կարող են նպաստել սվյալ տեղանքի քաղաքաշինական և ճարտարապետական ծրագրերի զարգացմանը:*

**Բանալի բառեր.** *Երևան, Կենտրոն, քաղաքաշինական միջավայր, գլխավոր առանցք, կառուցապատում, վերակառուցում, առաջարկություն, հայեցակարգ, տարբերակ*

**Ներածություն**

Ճարտարապետությունը և քաղաքաշինությունը ներկայումս առավել հաճախ կենտրոնանում են գոյություն ունեցող միջավայրերի և օբյեկտների վրա: Դա պայմանավորված է նրանով, որ այժմ քաղաքները և օբյեկտներն արդեն որոշակիորեն ձևավորված են և մասնագետներին առաջադրված խնդիրն այդ ձևավորված միջավայրերի ժամանակին գուզնթաց և բնականոն աշխատանքի ապահովումն է: Այսպիսով, արդի ճարտարապետության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում միջավայրերի բարելավման, վերակազմավորման, վերակառուցման և վերափոխման ստավորման մեթոդները՝ հաշվի առնելով սոցիալական, պատմական, տնտեսական և մշակութային գործոնները: Նմանատիպ դեպքերը լայն տարածում ունեն նաև ՀՀ տարածքում, մասնավորապես, Երևան քաղաքում, քանի որ վերջին ժամանակներում իրականացված՝ ինտենսիվ կերպով անկանոն, խառը և անհատական կառուցապատումները, նորմատիվատեխնիկական խախտումները խոչընդոտել են քաղաքաշինության զարգացման և միջավայրի ձևավորման գործընթացներին: Այդպիսի օրինակ է Երևան քաղաքի կարևոր հանգույցներից մեկը՝ Ե. Չարենց, Վարդանանց և Շահինյան

փողոցներով պարփակվող տարածքը, որը հանդիսանում է Արամի և Բուզանդ փողոցներով ձևավորված Գլխավոր պողոտայի վերջավորությունը և որի քաղաքաշինական խնդիրների վրա էլ կենտրոնանում է սույն աշխատությունը:

Թեմայի վերաբերյալ մասնագետների կողմից գիտական հետազոտություններում բազմիցս հիշատակվել են փաստեր և տեղեկություններ: Սույն խնդրի վերաբերյալ իրենց գիտական ուսումնասիրությամբ հանդես են եկել Ի. Միրզոյանը և Կ. Ազատյանը [1]: Կ. Ազատյանը նաև Ա. Ենգոյանի հետ կատարված ուսումնասիրություններում անդրադարձել է Երևանի Կենտրոնի բնակելի կառուցապատման խնդիրներին, որի մի մասը կազմում է Գլխավոր պողոտայի բնակելի կառուցապատումը [2]: Տեղանքում առկա են ճարտարապետական և քաղաքաշինական օբյեկտներ՝ նախագծված անվանի ճարտարապետների կողմից, որոնց մասին հիշատակվում են Մ. Թովմասյանի, Ա. Գրիգորյանի, Վ. Հարությունյանի, Ա. Մելիքյանի և Մ. Հասրաթյանի հրապարակումներում [3, 4]: Մ. Միքայելյանի գլխավորությամբ հրատարակված «Հայպետնախագիծ» ինստիտուտի 25-ամյա նախագծային կատալոգում ևս ներառված են այնպիսի շինությունների նախագծեր, որոնք ներկայումս քաղաքային միջավայրի այս հատվածի առաջնայիններն են հանդիսանում [5]: Հաշվի առնելով Ի. Միրզոյանի և Կ. Ազատյանի ներկայացրած վերակառուցման առաջարկությունը, որում մանրամասն հիմնավորումներով լուծում են ստանում տվյալ տեղանքի քաղաքաշինական, ճարտարապետական և տրանսպորտային մի շարք խնդիրներ, հարկ է նշել, որ սույն հոդվածի նպատակն է առաջարկել նաև միջավայրի վերակազմավորման հնարավոր այլ ուղղություններ: Այդ ուղղությունները բխում են նախկինում իրականացված գլխավոր հատակագծերի գաղափարներից, որոնք չեն իրականացվել կամ իրականացվել են մասամբ:

Հետազոտության առաջին մասն անդրադառնում է տարածքի պատմությանը, քաղաքաշինական զարգացմանը, տեղանքում իրականացված նախագծերի և ներկայիս խնդիրների բացահայտմանը: Երկրորդ մասում քննարկվում են առաջադրված խնդիրների հիման վրա մշակված երեք հայեցակարգերը:

Հայեցակարգերից առաջինը մշակված է տեղանքում առկա ներկայիս իրավիճակի, ֆունկցիոնալ նշանակությունների պահպանման հնարավորություններն առավելագույնս օգտագործելով և նվազեցնելով տնտեսական ներդրումները և շինարարական միջամտությունները:

Երկրորդը հիմնված է ճարտարապետ Կ. Հակոբյանի կողմից նախկինում իրականացված նախագծի ֆունկցիոնալ նշանակության՝ ֆիզկուլտուրայի կենտրոնի գաղափարի վրա, որի մի մասը չի իրականացվել և ժամանակի ընթացքում ենթարկվել է փոփոխության: Տարածքում առկա անկանոն և խառը կառուցապատումների փոխարեն առաջարկվում է տեղակայել սպորտային նշանակության օբյեկտներ:

Երրորդ հայեցակարգով առաջարկվում է կանաչ զանգվածներով, ակտիվ և պասիվ հանգստի գոտիներով պուրակ, որն էլ հիմնված է 1939 թ. գլխավոր հատակագծի կանաչապատ հրապարակի գաղափարի վրա: Սույն նախագծով էականորեն կրճատվում են կառուցապատումները,

կանաչի և ժամանցի գոտիներով նախատեսվում է բարելավել բնակչության հանգստի և ժամանցի հարմարավետությունը:

Հայեցակարգերի վերաբերյալ համեմատական պատկերացում կարելի է կազմել հետազոտության վերջում ներկայացված գլխավոր հատակագծերի և դրանց տեխնիկատնտեսական ցուցանիշների շնորհիվ, որոնք բացահայտում են տվյալ տեղանքի՝ Երևանի Հանրապետական մարզադաշտի հարակից տարածքի վերակազմավորման հնարավորությունները:

### **Նյութեր և մեթոդներ**

Հոդվածը մշակվել է 2022 թ. հունվար ամսից տեղանքում իրականացված լուսանկարչական, չափագրական զննումների, բնակչության հետ անցկացված հարցազրույցների և առ այսօր իրականացված գիտական աշխատությունների նախագծերի և հրապարակումների հիման վրա: Կիրառվել են նյութերի առանձնացված և ընդհանուր վերլուծության, բացահայտված խնդիրների տարանջատման և ընդհանրացման, մոդելավորման և ստացված մոդելի վերլուծության գիտական մեթոդները: Արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով ժամանակագրական հերթականությամբ քննարկման են ենթարկվել դիտարկվող տարածքի քաղաքաշինական պատմությունը, գլխավոր հատակագծերը, շենքերի և շինությունների նախագծերը: Ներկայումս ձևավորված իրավիճակի նկարագրության արդյունքում առանձնացվել են քաղաքաշինական խնդիրները: Դրանց հիման վրա մշակված հայեցակարգերի գաղափարները արտացոլվում են գլխավոր հատակագծերի սխեմաներով, իսկ համեմատությունները՝ տեխնիկատնտեսական ցուցանիշների աղյուսակում:

### **Արդյունքներ և քննարկում**


#### **Պատմական ակնարկ:**

Երևան քաղաքի Վարդանանց, Չարենց, Շահինյան փողոցներով պարփակվող տարածքը գլխավոր հատակագծի զարգացման տարբեր փուլերում մշակվել է տարբեր գաղափարներով (նկ. 1):

Դեռևս 1924 թ. Ալեքսանդր Թամանյանի կողմից մշակված Երևանի գլխավոր հատակագծից այն մասնակցել է որպես Արամի և Բուզանդ փողոցներով ձևավորված քաղաքաշինական առանցքի (Գլխավոր պողոտայի) հարավային բևեռը: Թամանյանի գլխավոր հատակագծում առանցքը, հատվելով մեծ օղակի (Չարենցի փողոց) հետ, ձևավորում է հրապարակ և այսպիսով հանգում է իր վերջավորությանը (նկ. 1ե) [6]:

1939 թ. մշակված գլխավոր հատակագծում հրապարակը «վերածվում է» կանաչապատ զանգվածի՝ դուրս մնալով մեծ օղակից, սակայն նկատվում է ռեկրեացիոն գոտու և առանցքի սերտ կապը, որը ավարտվում է պուրակով (նկ. 1գ):

Քաղաքի մշակույթի տարբեր բնագավառների զարգացման և նոր պահանջների առաջադրման շրջանակներում սպորտի հանդեպ հետաքրքրությունները ընդլայնվում են: Ճարտարապետական նախագիծը, որով քաղաքի այս հատվածը վերածվում էր «Դինամո» ֆիզկուլտուրայի կենտրոնի, որը հեղինակել է Ճարտարապետ Կ. Հակոբյանը, հանդիսանում է ներկայիս իրավիճակի պատմական կորիզը: Միջավայրը ձևավորվում էր մարզադաշտի շուրջ սպորտային տարբեր նշանակության օբյեկտներով՝ Հանրապետական մարզադաշտ, «Դինամո» փակ մարզադաշտ, բացօթյա լողավազան, երկրորդական մարզադաշտ և այլ սպասարկող օբյեկտներ [7]: Գաղափարը ձևավորվում էր գլխավոր պողոտայի և մարզադաշտի հրապարակի համատեղմամբ: Հրապարակն առաջին հերթին բաշխում էր մարզադաշտի հոսքերը, միաժամանակ պարփակում էր գլխավոր պողոտայի հորինվածքային վերջավորությունը (նկ. 2) [8]:



**Նկ. 1. Երևան քաղաքի Վարդանանց, Չարենց, Շահինյան փողոցներով պարփակվող տարածքը գլխավոր հատակագծի զարգացման ընթացքում, ա) 1837 թ., բ) 1856 թ., գ) 1911 թ., դ) 1920 թ., ե) 1924 թ., զ) 1939 թ., է) 1964 թ., ը) 1971թ., թ) 2007 թ.**

Նախագծի մասնակիորեն իրականացումն արտացոլվում է 1964 թ. հրապարակված գլխավոր հատակագծում, որտեղ երևում են մարզադաշտը, «Դինամո» փակ մարզադաշտը, լողավազանը և հարակից տարածքները՝ որոշակի փոփոխություններով (նկ. 1 է):

Հաջորդիվ, 1971 թ. գլխավոր հատակագծի մշակումներում ավելանում են որոշակի կառույցներ, փոխվում է պուրակի հորինվածքը և ավելանում են ջրային մակերևույթները: Տարածքի գործառնական նշանակությունների շարքում ընգրկվում են նաև բնակելի շինություններ:

Ներկայիս դրությամբ գլխավոր հատակագծի զարգացման վերջնակետը 2005-2007 թթ. հրապարակված կառուցապատման էսքիզն է [9]: Կառուցապատման էսքիզային նախագծում ավելանում են տարբեր նշանակության շինություններ: Հարկ է նշել, որ քաղաքաշինական առանցքի եզրափակումն անցնում է Չարենցի փողոցի հակառակ կողմ, որով էլ ենթադրվում են հորինվածքի զարգացման հետագա հնարավորությունները (նկ. 1 թ):


#### **Գոյություն ունեցող իրավիճակի նկարագրություն:**

Ճարտարապետական և քաղաքաշինական գաղափարները կյանքի կոչելիս բախվում են իրականության զանազան գործոնների: Դրանց չիրականացման պատճառով անհատական, կետային կամ առանձին ընկալվող շենքերի և շինությունների «տեղադրումը» առանց շրջակա միջավայրի առանձնահատկությունները և նույնիսկ նորմատիվային պահանջները հաշվի առնելու հանգեցնում է քառային իրավիճակի: Այս խնդիրն առկա է գրեթե ամբողջ տարածքում: Դրա վառ ապացույցն է իրավիճակային հատակագիծը: Վարդանանց և Շահինյան փողոցների անկյունային հատվածում այժմ տեղակայված են շինարարական զանազան խանութները, առևտրային տաղավարները, ուսումնարանը, բնակելի բարձրահարկ շինությունները, որոնք կտրում են Գլխավոր պողոտայի և Հանրապետական մարզադաշտի առանցքային և դիտողական կապը [10]: «Դինամո» փակ մարզադաշտի արևմտյան մասում առկա է փողոցից անթույլատրելի հեռավորության վրա տեղակայված բարձրահարկ բնակելի շենք, իսկ հարավային մասում սակավահարկ շինությունները դասավորված են անկանոն կերպով: Շենքերը և շինությունները դուրս են ընդհանուր հորինվածքային հայեցակարգից:

Անդրադառնալով Հանրապետական մարզադաշտին՝ կարևոր է նշել, որ թեև այն հանրապետական նշանակության մշակութային ժառանգության օբյեկտ է, սակայն հարակից կառուցապատումների պատճառով ընկել է շրջափակման մեջ և չունի համապատասխան քանակությամբ ավտոկայանատեղիներ և ռեկրեացիոն մակերեսներ [11]: Մարզադաշտի հարակից լողավազանը ևս կարևոր է և ենթակա է վերաօգտագործման: Ամբողջացնելով թվարկված խնդիրները և դիտարկելով տարածքի ֆունկցիոնալ սխեման, ակնհայտ է, որ շենքերը և շինությունները չեն ինտեգրվում մեկ գլխավոր հատակագծի հայեցակարգում և քաղաքային միջավայրը կորցրել է իր տեսքը [6, 12]:

Քաղաքաշինական այս հանգույցը տրանսպորտային բավականին մեծ հոսքեր է սպասարկում, սակայն այս տեսանկյունից ևս կան խնդիրներ: Փողոցներին հարող անկանոն և խախտումներով իրականացված կառուցապատումների արդյունքում փողոցներն ունեն լայնացումներ և

նեղացումներ, ինչը ստեղծում է անհարմարություններ երթևեկության համար, իսկ որոշ տեղերում մայթերի բացակայությունը ստիպում է հետիոտնին շրջանցել փողոցները: Այսպիսով, փողոցային և հետիոտն ցանցի խնդիրները վտանգավոր են մարդու կյանքի համար:



Նկ. 2. Քննարկվող տարածքի ֆունկցիոնալ և շարժումների սխեմաները

Տարածքի կառուցապատման, քաղաքաշինական միջավայրի, նորմատիվ պահանջների և տրանսպորտային խնդիրներին անհրաժեշտ է անդրադառնալ՝ համալիր լուծումներ փնտրելով:

**Հայեցակարգ-առաջարկների քննարկում:**

Հիմնվելով գլխավոր հատակագծի դրույթների վրա, կարելի է առանձնացնել երեք ուղղություններ, որոնք դիտարկվել են որպես զարգացման հնարավորություններ՝ բնակելի և խառը կառուցապատում, ֆիզկուլտուրայի կենտրոն և ռեկրեացիոն գոտի: Այս երեք գաղափարների մասամբ իրականացման և վերոհիշյալ քաղաքաշինական զարգացումների միաձուլման արդյունքում առաջացել են թվարկված խնդիրները, ինչը ստիպում է վերակազմավորման հնարավոր ուղղությունները դիտարկել առանձին-առանձին և համեմատել դրանք:

Թեև հնարավորությունները կարող են զարգանալ տարբեր ուղղություններով, միևնույն է, դրանցում կարևոր է հաշվի առնել այն խնդիրները և բաղադրիչները, որոնք ընդհանուր են բոլորի համար, այն են՝

- Գլխավոր պողոտայի հորինվածքային կապի ապահովումը Հանրապետական մարզադաշտի հետ: Դրանում կարևոր է դիտողական և հորինվածքային շեշտադրումն առանցքի շուրջ:


- Կառուցապատման վերակազմավորում գլխավոր հատակագծային մշակումներով, ինչի շնորհիվ շենքերը և շինությունները կինտեգրվեն մեկ ընդհանուր համալիրում:
- Միջավայրի մասշտաբային և հորինվածքային ներդաշնակություն շրջակա միջավայրի հետ:
- Հանրապետական մարզադաշտի համապատասխան նորմերի և պահանջների ապահովում միջազգային չափորոշիչներին համապատասխան: Ըստ նորմերի, մարզադաշտերի ռեկրեացիոն մակերեսները հաշվարկվում են 1 հանդիսականի համար 0,5 մ<sup>2</sup>, ըստ այդմ՝ 15000 հանդիսականի համար անհրաժեշտ է ապահովել 7500 մ<sup>2</sup> ռեկրեացիոն հարթակ: Ավտոկայանատեղերի քանակն ըստ նորմատիվ հաշվարկի կազմում է 1500 մեքենա:
- Մարզադաշտից արևելք տեղակայված լողավազանի վերաօգտագործում՝ ֆունկցիոնալ նշանակության հիման վրա:
- Տրանսպորտային շարժումների հարմարավետ միջոցների ապահովում, որոնցից ամենակիրառելին տարբեր մակարդակներով հատումներն են:

1. Հիմնվելով թվարկված ընդհանուր դրույթների վրա կարելի է որպես առաջին տարբերակ դիտարկել իրավիճակի առավելագույն վերաօգտագործման հնարավորությունները, կատարելով նվազագույն փոփոխություններ և միջամտություններ: Մարզադաշտի և Գլխավոր պողոտայի կապն ամրապնդելու և մարզադաշտի ռեկրեացիոն մակերեսն ապահովելու նպատակով առևտրահասարակական օբյեկտների քողարկումը ստորգետնյա անցումներում լուծում է միաժամանակ հետիոտն շարժման և առանցքային կապի խնդիրները: Ավտոկայանատեղիները և նախատեսվում է տեղակայել հողի նիշից ներքև, որի տանիքը կծառայի որպես ռեկրեացիոն հարթակ մարզադաշտի համար: Հարավային հատվածում անկանոն և խառը կառուցապատման սակավահարկ շենքերի փոխարեն բարձրահարկ շենքերի տեղակայման միջոցով ավելանում է բնակարանային ֆունդը: Ներկայումս բարձրահարկ շենքերի կառուցումն արդյունավետ է բնակչության աճի և պահանջների համար, եթե ապահովված են ճարտարապետագեղարվեստական և մասշտաբային ներդաշնակության դրույթները: Նմանատիպ կերպով նաև հողի նվազագույն կիրառման արդյունքում հնարավորություն է ընձեռվում ավելի շատ կանաչ մակերեսների կիրառումը բակային տարածություններում (նկ. 3ա):

2. Հաջորդիվ, ուսումնասիրելով Կ. Հակոբյանի կողմից նախկինում արված մարզական կենտրոնի նախագիծը և դրա չիրականացման բացասական հետևանքները, որպես վերակազմավորման երկրորդ տարբերակ հնարավոր է դիտարկել մարզական համալիրի հիմնումը գոյություն ունեցող սպորտային օբյեկտների պահպանման և նոր ենթակառուցվածքների համալրման շնորհիվ: Մույնով նախատեսվում է ֆուտբոլային պարապմունքների համար ավելացնել նոր մարզադաշտեր, մարզիկների համար նախատեսված կացարաններ և սպասարկող օբյեկտներ:

Տրանսպորտային և հետիոտն շարժումների հարմարավետության համար Գլխավոր պողոտայի հետ հետիոտն կապը նախատեսվում է իրականացնել վերգետնյա անցումով, իսկ Վարդանանց, Չարենց փողոցների հատվածում՝ ստորգետնյա անցումներով: Մույն նախագծով ավելի

արտահայտիչ է առանցքի շարունակական կապը, քանի որ վերակազմավորման ընթացքում ապամոնտաժվում են այնպիսի շինություններ, որոնք սպորտային համալիրի գաղափարի հետ չեն առնչվում (նկ. 3 ք):



**Նկ. 3. Հայեցակարգային տարբերակների գլխավոր հատակագծերը. ա) «Բնակելի համալիր», բ) «Ֆիզկուլտուրայի կենտրոն», գ) «Կանաչ և հանգիստ»**

3. Հաշվի առնելով, որ Երևանի Կենտրոնում վերջին տարիներին իրականացված ակտիվ կառուցապատումների ֆոնին նվազում են կանաչ զանգվածները, սույն հայեցակարգով նախատեսվում է կանաչապատ զանգվածներով հանգստի և ժամանցի գոտիների կենտրոնացում: Մեկ այլ կողմից դիտարկելով Օպերայի այգու և Անգլիական այգու դասավորությունը, Հանրապետության հրապարակի նկատմամբ ցույց են տալիս կանաչապատ զանգվածների բաշխումը հրապարակի առանցքներով, սակայն երրորդ առանցքի շուրջ կանաչ զանգվածները բացակայում են: Դրա պատճառն Օղակաձև զբոսայգում կառուցված շենքերն ու շինություններն են, ինչի արդյունքում նվազել են կանաչ զանգվածները և այն դուրս է մնացել հանգստի գոտու կարգավիճակից: Ի սկզբանե դրված քաղաք-այգու գաղափարն այսօր դեֆորմացվել է [13]: Վերակազմավորման այս առաջարկությունը, թեև կիրառելով նախորդ առաջարկների համեմատ մեծաքանակ ապամոնտաժումներ և միջամտություններ, տարածքը վերածում է պուրակի: Այդպիսով կանաչ զանգվածները կհավասարակշռվեն քաղաքաշինական առանցքներով և կբավարարեն այս հատվածի բնակչության հանգստի պահանջները: Նախագծով նախատեսվում է տարածքում տեղակայել միջոցառումների ամֆիթատրոն, որը դասավորված է Գլխավոր պողոտայի առանցքի և մարզադաշտի նկատմամբ սիմետրիկ, իսկ հյուսիսային և հարավային հատվածներում համապատասխանաբար ակտիվ և պասիվ ժամանցի գոտիներ: Գլխավոր պողոտայի և մարզադաշտի առանցքային և դիտողական կապն առավելագույնս ազատ է շենքերից և շինություններից: Հետիոտն շարժումներն առաջարկվում են ստորգետնյա անցումների միջոցով (նկ. 3գ):

Ամփոփելով հայեցակարգերը, նախատեսվող գործընթացների և արդյունքների մասին կարելի է պատկերացում կազմել ներկայացված տեխնիկատնտեսական ցուցանիշների շնորհիվ (աղյուսակ):

**Առաջարկությունների տեխնիկատնտեսական ցուցանիշները**

Տեխնիկատնտեսական ցուցանիշ, միավոր	Տարբերակ 1	Տարբերակ 2	Տարբերակ 3
Քանդվող շենքերի մակերես (հողի վրա), մ <sup>2</sup>	40400	45101	57601
Քանդվող շենքերի մակերես (հարկերով), մ <sup>2</sup>	58730	74100	135000
Կառուցապատվող շենքերի մակերես (հողի վրա), մ <sup>2</sup>	7000	10400	9700
Կառուցապատվող շենքերի մակերես (հարկերով), մ <sup>2</sup>	36000	22000	11000
Պահպանված շենքերի մակերես (հողի վրա), մ <sup>2</sup>	17201	12500	0,00
Պահպանված շենքերի մակերես (հարկերով), մ <sup>2</sup>	76270	60900	0,00
Կառուցապատման մակերես, մ <sup>2</sup>	24201	22900	9700
Ընդհանուր կառուցապատման մակերես, մ <sup>2</sup>	112270	82900	11000
Կառուցապատման տոկոս, %	10,95	10,36	0,04
Կառուցապատման գործակից	0,51	0,38	0,05
Կանաչապատման մակերես, մ <sup>2</sup>	48000	55000	62000
Կանաչապատման տոկոս, %	21,72	24,89	28,05
Հանգստի գոտիներ, բարեկարգում, մայթեր, հեծանվաուղիներ, փողոցներ, մ <sup>2</sup>	148799	143100	149300
Մարզադաշտի ավտոկայանատեղերի քանակ, հատ	1500	1500	1500

**Եզրակացություն**

Աշխատանքում փորձ է արվել հետազոտել Վարդանանց, Չարենց, Շահինյան փողոցներով պարփակվող տարածքը և բացահայտել ճարտարապետական և քաղաքաշինական խնդիրները, որի համար ուսումնասիրվել է տեղանքի զարգացման պատմական ակնարկը, այնուհետև գոյություն ունեցող իրավիճակը: Վեր են հանվել Գլխավոր պողոտայի առանցքային, տեղանքի կառուցապատման և Հանրապետական մարզադաշտին վերաբերող հարցերը:

Բացահայտված խնդիրների ամբողջացման և ընդհանրացման գիտական մեթոդներով առաջարկվել են նախագծային հայեցակարգեր, որոնք հիմնվում են տեղանքի գլխավոր հատակագծերի տարբեր փուլերում չիրականացված գաղափարների վրա: Այդպիսով, առաջարկությունները տարբերվում են ըստ ֆունկցիոնալ նշանակության և միջամտությունների մասշտաբներով:

Քննարկելով հայեցակարգերը՝ կարելի է եզրակացնել, որ վերակազմակերպելով քաղաքային միջավայրը կարելի է լուծել բնակելի գոտու, մարզադաշտի և տարածքի ենթակառուցվածքների խնդիրները:

Սպորտային կենտրոնի վերակազմակերպման շնորհիվ կարելի է վերադարձնել տարածքի պատմության կարևոր գաղափարներից մեկը, որը, ցավոք, մասամբ չի իրականացվել: Այդպիսով, Երևան քաղաքի քաղաքաշինական համակարգում իր ուրույն տեղը կունենա սպորտը և ֆիզկուլտուրան, որի հիմքը դրվել է Կ. Հակոբյանի նախագծով:

Հանգստի, ժամանցի և կանաչ գոտիների սակավության հիման վրա մշակված առաջարկությունը հնարավորություն կընձեռի քաղաքային միջավայրը վերածել ռեկրեացիոն գոտու և ապահովել տարբեր տարիքային խմբերի մարդկանց հանգստի և առողջ կենսակերպի կարիքները:

Այսպիսով, քննարկելով Հանրապետական մարզադաշտի հարակից տարածքի վերակազմավորման հնարավորությունները, բացահայտվել են զարգացման նոր ուղղություններ, որոնք կնպաստեն Երևան քաղաքի քաղաքաշինական և ճարտարապետական ծրագրերի իրականացմանը:

### Գրականության ցանկ

- [1] **К.Р. Азатян, И.А. Мирзоян**, Предложение по реконструкции квартала, прилегающего к улицам Вардананц, Чаренц и Шагинян города Еревана. Вестник МГСУ 15, Вып. 2 (2020) . 201–211. DOI: 10.22227/1997- 0935.2020.2.201-211.
- [2] **А.Р. Енгоян, К.Р. Азатян**, Архитектурно-градостроительные проблемы жилой застройки центра Еревана в настоящем. Вестник СГТУ 3 (76) (2014) 114-119.
- [3] **А.Г. Григорян, М.Л. Товмасян**, Архитектура Советской Армении. Стройиздат, Москва, 1986, 320с.
- [4] **В.М. Арутюнян, М.М. Асратян, А.А. Меликян**, Архитектура Советской Армении. Стройиздат, Москва, 1972, 158 с.
- [5] **М.Г. Микаелян**, «Армгоспроект» каталог творческих достижений за 25 лет. Госстрой Армянской ССР и Государственный головной проектный институт «Армгоспроект», Ереван – Москва, 1981, 186 с.
- [6] **Л.К. Долуханян**, Архитектура Советской Армении: 20-е годы. Советакан грех, Ереван, 1980, 84 с.
- [7] **В.В. Куйбышев**, Крытые стадионы (назначение, классификация, устройство). Стройиздат, Москва, 1973, 200с.
- [8] **О.Х. Халпахчян, М.И. Астафьева–Длугач, Корюн Акопян**, Народные архитекторы СССР. Стройиздат, Москва, 1991, 232 с.
- [9] **А.А. Алоян**, Преемственность архитектурно-планировочных решений при формировании нового юго-западного направления развития центра Еревана. Вестник МГСУ 7 (2013) 7-14.
- [10] **С.А. Колесников**, Композиционно-пространственная реорганизация городской среды. Метод видовых точек. Градостроительство и архитектура 7(2) ( 2017) 114-118. DOI: 10.17673/Vestnik.2017.02.18.
- [11] <https://docs.cntd.ru/document/456085751>, (accessed 03.04.2023).
- [12] **К. Линч**, Образ города: пер. с англ. Стройиздат, Москва, 1982, 328 с.
- [13] **А.В. Бунин, Т.Ф. Саваренская**, Градостроительство XX века в странах капиталистического мира, Том 2-ой, Издание 2-ое. Стройиздат, Москва, 1979, 415 с.

**ВОЗМОЖНОСТИ РЕОРГАНИЗАЦИИ ПРИЛЕГАЮЩЕГО УЧАСТКА  
РЕСПУБЛИКАНСКОГО СТАДИОНА ЕРЕВАНА**

**Астхик Гагиковна Газарян, Лилит Мануковна Астеян, Арно Мкртчичевич Багумян\***

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА*

*\*baghumyan.arn@gmail.com*

*В статье рассматриваются проблемы градостроительной среды участка, окруженной улицами Вардананца, Чаренца и Шагиняна. Цель работы - исследовать текущую ситуацию, выделить проблемы и на основе этих проблем обсудить предлагаемые решения. Статья разработана путем обсуждения комплексного исследования, основанного на научных публикациях, архивных документах, проектах и исследованиях территории с использованием методов сравнения, обобщения и моделирования. Результаты трех альтернативных предложений, становящимися целостными логическими решениями проблем, выявленных в ходе исследования, позволяют представить направления и обсудить возможности дальнейшего развития данной городской среды. Результаты статьи могут способствовать разработке градостроительных и архитектурных программ данной территории.*

**Ключевые слова:** *Ереван, центр, градостроительная среда, доминанта, застройка, реконструкция, предложение, концепция, вариант*

**POSSIBILITIES FOR REORGANIZATION OF THE ADJACENT AREAS OF THE REPUBLICAN  
STADIUM OF YEREVAN**

**Astghik Ghazaryan, Lilit Asteyan, Arno Baghumyan\***

*National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA*

*\*baghumyan.arn@gmail.com*

*This paper examines the problems of the urban planning environment of the area surrounded by Vardanants, Charents and Shahinyan streets. The aim of the paper is to investigate the current situation, highlight problems and discuss proposed solutions based on these problems. The article is developed by discussing a comprehensive study based on scientific publications, archival documents, projects and studies of the territory, using methods of comparison, generalization and modelling. The results of 3 alternative proposals, which become holistic logical solutions to the problems identified in the study, allow to present directions and discuss the possibilities of further development of the given urban environment. The results of the article can contribute to the development of urban and architectural programs.*

**Keywords:** *Yerevan, center, urban environment, dominant, construction, reconstruction, proposal, concept, option*

**Ղազարյան Աստղիկ Գագիկի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետական նախագծման և Ճարտարապետական միջավայրի դիզայնի սմբիոն, մագիստրոս, (+374)93221422, astkhik.gazaryan@mail.ru,  
**Աստեյան Լիլիթ Մանուկի** (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետական նախագծման և Ճարտարապետական միջավայրի դիզայնի սմբիոն, մագիստրոս, (+374)55951687, lilit.asteyan@mail.ru,

*Բաղումյան Առնո Մկրտչյի (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, Ճարտարապետական նախագծման և ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, մագիստրոս, (+374)44474471, baghumyan.arn@gmail.com*

*Газарян Астхик Газиковна (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, магистр, (+374)93221422, astkhik.gazaryan@mail.ru, Астеян Лилит*

*Мануковна (РА, г. Ереван) – НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, магистр, (+374)55951687, lilit.asteyan@mail.ru, Багумян Арно Мкртичевич (РА, г. Ереван) –*

*НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, магистр, (+374)44474471, baghumyan.arn@gmail.com*

*Ghazaryan Astghik (RA, Yerevan) – NUACA, Chair of Architectural Drafting and Design of Architectural Environment, master, (+374)93221422, astkhik.gazaryan@mail.ru, Asteyan Lilit (RA, Yerevan) – NUACA, Chair*

*of Architectural Drafting and Design of Architectural Environment, master, (+374)55951687, lilit.asteyan@mail.ru, Baghumyan Arno (RA, Yerevan) – NUACA, Chair of Architectural Drafting and Design of*

*Architectural Environment, master, (+374)44474471, baghumyan.arn@gmail.com*

*Ներկայացվել է՝ 03.04.2023թ.*

*Գրախոսվել է՝ 18.04.2023թ.*

*Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.*